

# ԱՔԵՏԱՐԵՐ



“ԹՈՂ ՏՈՒՆԻՔ ՄԱՆԲ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԳՈՒԿ. ԵՂ. 16.

ՀԱՏՈՐ ԻԹ.

ԿՈՍՏԱՆՆՈՒՊՈԼԻՍ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, 1900

ԹԻՒ 10

## ԲԱՂԱԱՄ ԵՒ ԲԱՂԱԿ

Այն պատմութիւնը զոր մեր միաքը բերելու համար դրուած է սոյն պատկերը, թուոց գիրքին իՔ. — ԻԳ. գլուխներուն մէջ կը գտնուի: Բաղակ, տէրը Մովաբի երկրին, որ Մեռեալ ծովուն արևելեան կողմը կ'իյնայ, տեսնելով թէ իսրայելացիք բոլորովին կորսնցուցին Ամորհացիները, իր մտակայ դրացիները, սարսափեցաւ և Մադիանացոց հետ դաշնակցեցաւ անոնց դէմ կռուելու համար: Բայց կռիւի սկսելէ առաջ մարդ զրկեց հրաւիրելու համար Բաղաամ հարցուկը, որ կը բնակէր հեռուն Միջագետքի մէջ, և որուն համբար սակայն մինչև շատ հեռու տեղեր տարածուած էր: Բաղակ կը հաւատար թէ Բաղաամի այնպիսի կարողութիւն տրուած էր որ անոր անիծածը անիծեալ և օրհնածը օրհնեալ է: Եթէ Բաղաամ անիծէր իսրայելը, Բաղակ յաջողութեան յոյսով պիտի կռուէր: Ուստի երբ տեսաւ որ Բաղաամ մերժեց իսրայելէն անիծել, Բաղակ չհամարձակեցաւ պատերազմիլ անոնց դէմ:

Բաղաամի պատմութիւնը շատ խորհրդաւոր և հետաքրքրաշարժ է: Բաղաամ թէպէտ իսրայելացի չէր, սակայն քիչ մը բան գիտէր ճշմարիտ Աստուծոյ վրայով, ինչպէս հաւանօրէն ուրիշներ ալ գիտէին Միջագետքի մէջ որ Աբրահամու համու հայրենիքը և նախկին բնակավայրն էր: Բայց աւելի զարմանալին սա է որ անիկա խօսեցաւ Աստուծոյն ներշնչութիւնով, և անոր մարգարէութիւններէն մէկ քանին Հին կտակարանի ամենէն գեղեցիկ կտոր-



ներուն կարգէն են: Կարգա թու. ԻԳ. 8—10 և ԻԳ. 5—9, 17, և պիտի տեսնես թէ այնպէս է:

Երկու դասեր հանենք այս պատմութիւնէն: Մէկը սա՛ թէ ապահով անոնք են որ Աստուծոյ շնորհքը կը վա-

յելեն: Իսրայել Աստուծոյ ժողովուրդն էր, և որչափ ժամանակ որ անոր հաւատարիմ ըլլային իսրայելացիք, Աստուծոյ կը պաշտպանէր զանոնք բոլոր թշնամիներէն որ անոնց դէմ կ'ելէին, և անէ՛քք օրհնութեան կը դար-

ձընէր: Միւս դասը սա է թէ մինչև անգամ մարդ մը որ լուսաւորուած է Աստուածային ճշմարտութիւններու մասին, երբ ազահուածեան և փառասիրութեան անձնատուր կ'ըլլայ, ինչպէս եղաւ Բաղասամ հարցուկը, իր վրայ կը բերէ Աստուծոյ բարկութիւնը (Թու. ԻԲ. 22):



ՏԳԵՂՆ ՀԱՄԲՈՒՐՆԸ

Մէրը բարկութեան կը յաղթէ. Համբոյրը հարուածէն աղէկ է: Բարի կաթը չարը կը նուաճէ:

Օր մը, կ'ըսէ Պոսթըն աշխատող միսինար մը, նախակրթական դըպրոցներէն մէկն այցելեցի: Չորսէ մինչև ութ տարեկան մանուկներ կը գտնուէին հոն: Իբր եօթը տարեկան տղայ մը և անոր իբր հինգ տարեկան քոյրը մօտս կը նստէին, և մինչ կը խօսէի դպրոցին, տղան ճորձ բռունցով զարկաւ իր քրոջ գլխուն: Աղջիկը անմիջապէս բարկացաւ և ձեռքը վերցուց որ ինքն ալ իր եղբորը զարնէր: Վարժուհին այդ վայրկեանին զանիկա տեսնելով՝ ըսաւ անմիջապէս, «Մէյրի, աւելի աղէկ է որ համբուրես զանիկա:» Աղջիկը վար առաւ ձեռքը, և վեր նայեցաւ իր վարժուհիին վրայ, իբր թէ չհասկնալով վարժուհիին ըսածը: Անիկա երբեք սորված չէր չարիքի փոխարէն բարիք ընել, և կը խորհէր թէ, եթէ իր եղբայրը իրեն զարկաւ, ինքն ալ անոր զարնելու էր: Վարժուհին շատ քաղցրութեամբ նախելով ճորձի և Մէյրիի վրայ, նորէն ըսաւ, «Միերի Մէյրի, աւելի աղէկ է որ համբուրես եղբայրդ: Տես թէ ինչպէս բարկացած ու ապերձանիկ է:» Մէյրի նայեցաւ իր եղբոր վրայ որ շատ տխուր և թշուառ կ'երևնար: Բայց շուտով մոռնալով իր բարկութիւնը, իր երկու բազուկները եղբոր վրայ փակեց և համբուրեց զանիկա: Խեղճ տղան, որ երբեք չէր սպասեր ասանկ փոխարէնի մը, արցունքի գետ մը վազցուց այքերէն: Աջին քոյրիկը իր գոգնոցին մէկ անկիւնը ձեռքն առաւ և եղբորը արցունքները սրբեց և զանիկա մխիթարել ուղերով ըսաւ, «Մի լար, ճորձ, ինծի շատ վնաս չըրիր:» Բայց ասոր վրայ ճորձ աւելի շատ լացաւ:


Առակ մը կայ թէ երկրորդ հարուածն է որ կը սկսի կռիւը: Ամէնքս

ալ նայինք որ երկրորդ հարուածը չը զարնուի, և այն ատեն առաջինը քիչ պիտի վնասէ:

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ

Աշխարհիս ամենէն շահեկան տեղերէն մին որ կ'արժէ այցելել՝ Բրիտանական Թանգարանն է, բայց քանի մը օրեր պէտք են անոր զարմանալի ընդարձակութեան և պարունակած բաներուն զանազանութեան վրայով գոհացուցիչ տպաւորութիւն մը ստանալու համար: Շէնքը 370 ոտք երկայնութիւն ունի և երեքուկէս միլիոն Անգլ. ոսկի ծախքով շինուած է: Թանգարանին հիմնարկութեան համար առաջին քայլը առնուեցաւ

Թանգարանին կեդրոնը շատ ընդարձակ ընթերցարան մը կայ: Շէնքին բաժանումներուն մէջ կայ հատ մը որ տպագրուած գիրքերու յատկացած է, և կը պարունակէ տպագրուած առաջին գիրքերէն շատը, բաժանում մը կայ ձեռագիրներու համար, բաժանում մը՝ դժագրութիւններու համար, շատ նշանաւոր բաժանում մը՝ հնութիւններու համար, որ կը պարունակէ Յունական, Հռոմէական, Եգիպտական, Ասորեստանական, Բրիտանական և ուրիշ հնութիւններ, դրամներ, շքադրամներ, և այլն: Բնապատմութեան թանգարանի համար «Հարաւային Գէնտիկըն Թանգարան» կոչուած նոր շէնք մը



1753ին, ծախու առնելով գիրքերու, դրամներու և շքադրամներու (միտուլ) պատուական քարերու և շատ ուրիշ հնութիւններու հաւաքածոյ մը որ Սըր Հանս Սլոնի կը վերաբերէին, նաև Բոպլըթ Հարիի պատկանող ձեռագիրներու հաւաքածոյ մը: Սլոնի հաւաքածոյին համար 20,000 Անգլ. ոսկի տրուեցաւ և Հարիի հաւաքածոյին համար 10,000 ոսկի: Եւ Խորհրդարանը արտօնեց ստակը վիճակահանութեամբ ձեռք բերել, վասն զի այդ ատեն վիճակահանութիւնը արգելուած չէր Անգլիոյ մէջ: Հին շէնք մը գնուեցաւ ծախու առնուած բաներուն համար: Բայց անոնց վրայ Յունաստանէ, Եգիպտոսէ և ուրիշ տեղերէ յաւելուածներ ընելու համար Խորհրդարանը որոշեց կառուցանել նոր և գեղեցիկ շէնք մը, որ սկսուեցաւ 1823ին և լմնցաւ 1850ին, և նոր թիւեր ալ կցուեցան երբ հարկ եղաւ

կառուցուած է Հայտ փարքի մէջ: Բոլոր հաւաքածոներուն ծախքը մէկ միլիոն Անգլ. ոսկիէ աւելի եղած է, բայց կ'արժէր որ այսքան ստակ ծախուէր իբրև միջոց ժողովրդային հրահանգութեան: Պատմական և հնարասական ուսումներու զանազան ճիւղերու մասնագէտներ ալ մեծապէս օգուտ կը քաղեն անկէ:



ՎԵՐՋԱՊԵՍ ԳՈՐԾԻՆ ՄՏԱՒ

Հետևեալ մանրավէպը, որ Անգլիերէն լրագրէ մը առնուած է, Սկովտիոյ կլասիօ քաղաքին ձեռագործներու ընկերութեան մը աւանդութիւններէն մէկն է, կ'ըսուի: Լոկ աւանդութենէ աւելի բան մը, այսինքն ստոյգ պատմութիւն մը ըլլայ կամ ոչ, Սկովտական աշխատասիրութիւն և հաստատամտութիւն ցուցնող պատմութիւն մըն է: Բոպիկ և ցնցոտիներ հագած տղայ մը

նշանաւոր ընկերութեան մը մեծին կը ներկայանայ և կը խնդրէ որ ասդին անդին բաներ տանելու գործ մը տայ իրեն: «Իրաւ որ ատանկ գործ ընող տղի պէտք ունինք, բայց զոչ մը կօչիկ ունենայու ես», ըսաւ մարդը, Մր. Պէնք: Տղան ծանրութեամբ գլուխը շարժելով գնաց աներևութացաւ: Ինքը շուկային մէջ այլևայլ գործեր ընելով ապրուստը կը հանէր, և գիշերները խանութներէն մէկուն երգիքին ներքե կը քնանար: Երկու ամիս անցաւ մինչև որ կօչիկները գընելու չափ ստակ տւելցոյց: Յետոյ առաւօտ մը Մր. Պէնքի ներկայացաւ ձեռքը ծրարով մը: «Ես հիմա կօչիկ ունիմ, տէր», ըսաւ:

Մր. Պէնքը դժուարաւ յիշեց տղան և անոր պարագաները: «Գուն գործ մը կ'ուզես, այնպէ՞ս է: Բայց աս ցնցոտիներով չըլլար, տղաս, դուն մեր վաճառատան նախատինք կը բերես»: Տղան վայրկեան մը վարանցաւ և յետոյ գնաց առանց բառ մը արտասանելու: Վեց ամիս ետքը նորէն եկաւ տղան աղուոր մը հագուած նոր, թէպէտ աժրնոյ, ձեռք մը հանդերձով: Տղան Մր. Պէնքի ուշադրութիւնը գրաւեց: Մր. Պէնքը առաջ աղէկ մը դիտեց տղան: Անոր նիհար և անարիւն դէմքը կը ցուցնէր թէ անիկա ինքզինքը զրկած էր ուտելիքէ որպէս զի հանդերձները գնէր: Ընկերութեան պետը հարցափորձեց զանիկա, և տեսաւ ցաւով որ տղան կարդալ, գրել չէր գիտեր: «Անհրաժեշտ է որ կարդալ գրել գիտնաս որ կարող ըլլանք քեզ գործածել ծրարներ տանելու ասդին անդին: Մենք քեզի համար գործ չունինք», ըսաւ: Տղին երեսը աւելի դեղնեցաւ, բայց առանց դանգատի խօսք մը բերնէն հանելու՝ աներևութացաւ: Հիմա տանըհինգ մղոն հեռու գնաց դիւղ մը և գիշերային դպրոցի մը մօտ ախոռի մէջ աշխատելու գործ մը գտաւ: Երբ տարի մը անցաւ, նորէն ներկայացաւ Մր. Պէնքի: «Ես հիմա կըրնամ կարդալ ու գրել», ըսաւ:


«Գործը տուի անոր», ըսաւ վաճառատան տէրը տարիներ ետքը, «սա համոզմամբ թէ կանուխ կամ ուշ օր մը իմ գործս պիտի ունենայ, եթէ միտքը դնէ այնպէս ընել: Մարդիկ կամաց կը բարձրանան Սկովտիոյ վաճառատուններուն մէջ, բայց հիմա անիկա մեր գործաւորներուն մեծն է:»

ՄԱԼԱՎԱ ԾԱՌԸ

Եթէ Աւստրալիան ցամաք սեպենք, Նոր Կուինէա աշխարհիս ամենէն մեծ կղզին կ'ըլլայ. և ժամանակով, թէպէտ ըլլայ մարդուն ստեղծումէն առաջ, հաւանօրէն կցուած էր Աւստրալիայի, վասն զի զանոնք իրարմէ զատող նեղուցին խորութիւնը բարձրահասակ մարդու մը հասակին հազիւ ութ կամ ինն անգամը կայ: Արդարև բնական Աշխարհագրութիւնը, այն շատ և շահեկան ուսումը, կը սորվեցնէ թէ հաւանօրէն աւելի կանուխ ժամանակի մը մէջ Աւստրալիա կըցուած էր Ասիոյ, և ուստի Արևելեան Զամաքը լայն մարմին ունէր Հիւսիսա-

ՊՈՂԻԿԱՐՊՈՍ ՄԱՐՏԻՐՈՍԸ

Մէկն ամենէն աղիւ անձերէն որոնք Նոր Կտակարանին մէջ յիշուած անձերուն ժամանակէն անմիջապէս ետքը ապրեցան, Պողիկարպոս Զմիւռնիացի մարտիրոսն է: Անիկա այն ուսուցիչներէն էր որ Առաքելական կը կոչուին, վասն զի անոնք այնքան կանուխ ապրեցան որ Յիսուս Քրիստոսը անձամբ տեսնողներէ սորվեցան: Քրիստոսի 167 թուականին էր երբ Պողիկարպոս 86 տարեկան հասակին մէջ զոհ գնաց հանրութեան կատաղութեան՝ նոր կրօնքին հետևողներուն դէմ: Պողիկարպոս փոքր Ասիոյ եկեղեցիներուն մէջ այն-



յին կիսագունդին վրայ, և երկու իրարմէ շատ դատուած սրունքներ՝ Հաւաւային կիսագունդին վրայ: Նոր Կուինէա և Աւստրալիա այնչափ երկարատեն զատուած մնացած են Ասիայէ որ կենդանիներ և բոյսեր որ շատ դանդաղ է ի վեր ջնջուած են Ասիայէ, և թէ երբեք կը գտնուէին Ասիոյ մէջ, տակաւին կը գտնուին այնտեղ: Հոն կը գտնուին պարկուր կենդանիներ նման քանկարուին, գեղեցիկ թռչուններ նման դրախտահաւին, և շատ մը բոյսեր և ծառեր: Նոր Կուինէայի մէկ մեծ մասը ծածկուած է անտառներով, որոնց ծառերէն շատը շատ կը բարձրանան: Անոր ահագին ծառերէն մէկն է Մալավան, որուն բունին խոշորութիւնը կրնանք դատել անոր քով նստած բնիկներուն հետ բաղդատելով:

պէս երևելի էր որ երբ հալածանքը ելաւ, իսկոյն որոշուեցաւ որ փնտրուի անիկա: Երբ հալածիչները անոր բնակարանն հասան, անոնց առջև տեղիք և խմելիք դնել հրամայեց, և մինչև որ անոնց հետ գնաց, այնպիսի զօրութիւնով աղօթեց որ անոնցմէ ոմանք զղջացին ասանկ աստուածապաշտ մարդ մը բռնելու եկած ըլլալուն համար: Կուսակալը յորդորեց զանիկա կայսրը Տէր ճանչալ, և կայսրին արձանին առջև խոնարհութիւն ընել և ըսել «Կորսուի՞ն անաստուածները»: (Քրիստոնեաները այն ատեն անաստուած կը համարուէին վասն զի տեսանելի աստուծոյ երկրպագութիւն չէին ընէր:) Բայց Պողիկարպոս այս վերջին հրամանին այնպէս հնազանդեցաւ ինչպէս չէր ուզեր կուսակալը, վասն զի կուսապաշտ բազմութեան նախելով և իր ձեռքը դէպ անոնց կող-



մը շարժելով աղաղակեց, «Կորսուի՞ն անաստուածները:» Կուսակալը նորէն աղաչեց որ ետ դառնայ Գրիստոնէութենէ, ըսելով, «Հայհոյէ և քեզ ազատ կ'արձակեմ, նախատէ Գրիստոսը:» Այն ատեն ծերունի հաւատացեալը պատասխանեց, «Ութսունըվեց տարիներ ծառայած եմ անոր և անիկա ինձի բարիքէ զատ ուրիշ բան ըրած չէ, ուրեմն ի՞նչպէս կրնամ հայհոյել իմ թագաւորին և փրկչին դէմ:» Ասոր վրայ դատապարտուեցաւ ողջ ողջ այրուելու: —

ՁԱՅԼԱՄԻՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Միսին Աննի Մարթին, «Առտնին Կեանք Զայլամի Ագարակի Մը վրայ» գրած միջոցին, այս թռչունին քանի մը ուշադրութեան արժանի սովորութիւնները կը յիշէ: Այս սովորութիւններուն մէկն է ջայլամի երամակի մը անշատ ընտանիքներու բաժնուիրը: Բարեբաղդապէս մէկ անգամուն մէկէ աւելի ջայլամէ յարձակում չես կրեր, ինչու որ ամէն մէկ խոշոր խումբի մէջ, որ իր երկու հազար ջայլամներէ կը բաղկանայ, թռչունները զոյգ զոյգ վանդակի մէջ դրուած չեն, հասցա գրեթէ վայրի անասուններու նման ազատ կ'ապրին: Ամէն մէկ ջայլամ իրեն յատուկ իշխանութիւնն ունի, ուրիշներուն իշխանութիւնէն բաժնուում: Երեւակայական սահմանագծով մը զոր միայն ինք կը տեսնէ, բայց այնպէս որոշ կերպով նշանակուած ինչպէս է Լոնտոնի ոստիկանութեան պաշտօնեաներուն իշխանութեան սահմանագիծը: Հոն կը բնակի ջայլամը, միապէս բոլոր իր տեսողութեան ներքե ինկողներուն: Իր երկիրը մանել համարձակող ունի ուրիշ ջայլամ անմիջապէս յարձակում կը կրէ, և եթէ մշտնօրէ մարդ ըլլայ, կը հարածուի մինչև որ երկրին փետրաւոր տէրը անոր իր սահմաններէն հեռանալը տեսնէ: Երբ օտարականը այսպէս դուրս կը հանուի, այն յոյժ կատաղի թռչունը անմիջապէս կը հանդարտի և բոլորովին անփնտաս կ'ըլլայ: Զանիկա կը հանէ իր խորհուրդներէն և հանդարտութեամբ ետ կը դառնայ քաղաւ ատեն արածուելով: Հիմա հեռուանց կը տեսնէք գլուխը և երկար պարանոցը անոր դէրացիին որուն իշխանութեան սահմանը նոր մտած էք, և որուն սուր աչքերը տեսան ձեզ այն վայրկեանին որ ոտքերնիդ անոր սահմանագիծէն ներս դրիք: Հիմա անիկա ձեր կողմը կու գայ ցնցուելով և զգաճգութեան շարժումներով իր թէ ձեզի խոնարհե-

լու և բարի գալուստ մաղթելու համար: Բայց ասիկա հեռու է անոր խորհուրդներէն: Մէկ երկու անգամ նստելէն ետքը ձեզ ասպարէզ հրաւիրելու համար, որով կը յուսայ ձեզ վախցնել, ցատկելով կու գայ, և այն ատեն նորէն դաւազան պէտք է: Այս պէս, առաւօտ մը երբ անոնց մէջէն կը քայլէք, կարելի է որ չորս հինգ վայրագ թռչուններու հանդիպէք յաջորդաբար, որոնք ամէնն ալ կը թուի թէ որոշած են սպաննել ձեզ, եթէ կարելի է, բայց բոլորովին կը զրոպուին փուշերու հարուածներու տակով: —

ԼԱՓՈՆԻԱՅԻ ՄԱՆՈՒԿՆԵՐ

ԵԿԵՂԵՅՅԻՆ ՔՈՎ

Ըսեմ ձեզի թէ Լափոնիացի մայրերը ինչպէս կը պահեն իրենց պէպէքները կիրակի օրերը որպէս զի քարոզիչը անհանգիստ չըլլայ: Խեղճ մանկիկներ, կարծեմ ամէն տեղ զանոնք եկեղեցիէն դուրս պահելու գէշ սովորութիւնը առաջ կ'երթայ: Կը կարծեմ նաև թէ քարոզիչները իրենց ներսէն այդ բանին համար գոհ են: Բայց Լափոնիացի մայրիկները տունը չեն կենար իրենց պէպէքներուն հետ: Լափոնիացիք շատ կրօնասէր ժողովուրդ մը են: Շատ հեռու տեղերէ կ'երթան իրենց քարոզիչը լսելու: Ամէն մէկ միսինար վատահ է թէ բազմութիւ ունկնդիրներ պիտի ունենայ, և ուշադրութեամբ մտիկ ընող ունկնդիրներ: Կըրնայ լսել երբ գնդասեղ մը գետինն իյնայ, այսինքն եթէ ինք գետինը ձգէ գնդասեղ մը: Ժողովուրդը յետին ծայր լուծիւն կը պահէ եկեղեցիին մէջ քարոզի ատեն: Բոլոր պէպէքները եկեղեցիին դուրսի կողմը ձիւնին մէջ կը թաղուին: Ընտանիք մը փայտէ պղտիկ եկեղեցին հասածին պէս, բախիլը քաշող եղիկը կ'արձակուի և մէկ կողմ կը կապուի: Հայրիկը ձիւնին մէջ փոքրիկ անկողին մը կը բանայ, և մայրիկը պէպէքը մուշտակներով աղուոր մը փաթթելէ ետքը հոն կը դնէ: Յետոյ հայրիկը ձիւնը բոլորտիքը կը դիզէ, և շունը քով կը դրուի որպէս զի հսկէ մանկիկին մինչ ծնողքը եկեղեցի կ'երթան վայելուչ կերպով: Քսան երեսունէ աւելի մանկիկներ ձիւնին մէջ կը պառկին եկեղեցիին բոլորտիքը, և երբեք լսած չեմ անոնցմէ մէկին համար թէ նշահեղձ (պողուրմագ) կամ սառած ըլլայ: Կարծեմ թէ այն ծուխի մէջ սովորած պղտիկները դիմացկուն են:

Բայց ի՞նչ պիտի ըլլային արդեօք կը կարծէք մեր կակուղ, փափուկ, ճերմակ ու կարմիր մանկիկներն եթէ անոնց տեղն ըլլային: —

ԹՈՉՈՒՆՆԵՐՈՒ ՊՈՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ

Լրագիր մը հմայիչ պատմութիւն մը կ'ընէ միջագետքի մը որ Շիբակոյի մեծ հրդեհին ժամանակը պատահած է: Լճին եզերքին մօտ բնակող ընտանիք մը շատ մը թռչուններ կը պահէր: Թռչնաբան մը շինած էր, երկար, նեղ սենեակ մը ապակի պատուհաններով որ ձեղունէն մինչև յատակը կը հասնէին: Մնցորդները շատ անգամ կը կայնէին տանը առջևը, և կը դիտէին գեղեցիկ թռչուններուն թռչալը, կը լսէին անոնց երգերը և կամ կը տեսնէին անոնց լուացուիլը: Հրդեհին շարժումն օր մը կէսօրէն ետքը, թռչուններու բազմութիւն մը ամպի պէս անցաւ փողոցէն: Եւ ահա այս թռչունները, որոնց շատը դեղձանիկ (քանարեա) էին, տեսան թռչնարանին մէջ դանուող երջանիկ խումբը: Շիտակ դէպ ի անոր պատուհանները թռան և ոմանք ապակիներուն զարնուեցան: Տան տիկիններն ու օրիորդները շուտով հասկցան բանը: Աճապարանքով իրենց թռչունները թռչունարանին մէկ սենեակին մէջ փակեցին, այնուհետև պատուհանները լայն բացին, և իրենք մէկ կողմ քաշուեցան որպէս զի ճամբորդ թռչունները ազատ համարձակ ներս մտնէին: Քանի մը վայրկեան ետքը նախ թռչուն մը, յետոյ ուրիշ մը ներս թռաւ, և այսպէս անոնք ներսը լեցուցին և թառեցան հոն, հեալով և երախտագիտութիւն զգալով իրենց վայելած հանգիստին և ապահովութեան համար: Ժամանակ մը անցաւ մինչև որ ուտել և լուացուիլ սկսան: Երբ օտարականները թռչունի կերէն կերան և հանգիստ առին, ընտանի թռչուններն ալ անոնց մէջ մտցուեցան, և շատ հաճելի էր լսել միաբերան երգումը երգերն ու դայլայիկները երբ իրարու միացան տան թռչուններն ու օտարականները:

Այս միջագետքը կը պատմէ տիկիններէն մէկը որ այժմով տեսած էր այդ դէպքը:

Տարեկան բաժանորդական քաղաքի մէջ, կանիկ, ամէն տեղոյ քաղաք:

Ամերիկայի Միսինարայ Գրքերի Գործարարական Սրբոց Կոմիտէ

Սրբոց Կոմիտէի Կարգով

Տնօրէն—Խմբագիր

ԿՈՍՏԱՆԴՆՍԻՆ

Ի ՏՊԱՐԱՆ Ա. ՅԱՆՈՐ ՊՅՍՏԱՆԸ

Ֆինանսընթաց Երգուող, Ամերիկան Խան